ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Թրաստիկ և Ներդրումային Բանկինգ

ARMSWISSBANK
Private & Investment Banking

2011
Տարեկան հաշվետվություն

ՑԱՆԿ

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 2

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ 5

ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ 9

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 15

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 16

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ 17

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 18

ՄԱՐՔԵԹԻՆԳ 20

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 21

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

2011թ. Բանկը շարունակել է կայուն զարգանալ և նոր ձեռքբերումներ արձանագրել՝ ՀՀ բանկային համակարգում ամրապնդելով իր մրցակցային դիրքը: Չնայած բանկային համակարգում նախորդ տարիներին սկսված մրցակցության սրացման միտումների շարունակմանը, ինչը հատկապես արտահայտվում է վարկային ռեսուրսների առաջարկի ավելացմամբ, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի շրջանակներում, Բանկը տարին ամփոփել է գործունեության հիմնական ցուցանիշների աճով և ապահովել շուրջ 1,2 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ:

Բանկը շարունակել է զարգանալ՝ ունենալով մի շարք էական ձեռքբերումներ. ապահովել է իր կողմից մատուցվող ծառայությունների թե՛ որակական և թե՛ քանակական աճ, արդյունավետ կերպով մշակել և ներդրել է նոր ծառայություններ:

Ելնելով հաճախորդների կողմից ներկայացված պահանջներից, Բանկը 2011թ. մշակեց «Դեբիտորական պարտքի ֆինանսավորում» և «Ֆակտորինգ-Երաշխիք» ծառայությունները, որոնք լայն կիրառություն գտան մատակարարների շրջանում:

2011թ. ֆինանսական տարվա ընթացքում Բանկը ներդրեց «Պատվերի ֆինանսավորում» վարկային նոր ծառայությունը: Վերջինս նորություն չէ միջազգային շուկայում, սակայն տեղական շուկայում այն լայն տարածում չի գտել, քանի որ ծառայության մատուցումը սահմանափակ քանակով բանկերի կողմից է իրականացվում: Նշված ծառայությունը, որի նկատմամբ ձևավորված պահանջարկից ելնելով նախատեսվում է հետագայում ավելացնել ֆինանսավորման ծավալները, համահունչ է Բանկի կողմից առաջարկվող այլ կորպորատիվ ծառայություններին:

2011թ. Բանկը ներդրել է «Ինտերնետ-Բանկ» համակարգը, որը հաճախորդներին հնարավորություն է ընձեռել արագ և հարմարավետ կառավարել իրենց հաշիվները՝ վերացնելով ժամանակային և աշխարհագրական սահմանափակումները:

2011թ. Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության բնագավառում: Այսպես, «ԱՐՄԻՆՖՈ» լրատվական գործակալության կողմից ՀՀ բանկերի միջև անցկացված «Լավագույն մրցակից» հարցման արդյունքներով Բանկը լավագույնն է ճանաչվել «ՀՀ պետական արժեթղթերի շուկայում ակտիվություն» և «Կորպորատիվ պարտքի շուկայում ակտիվություն» անվանակարգերում:

2011թ. Բանկը ձեռնամուխ եղավ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի երրորդ թողարկման կազմակերպմանն ու տեղաբաշխմանը՝ հանդես գալով որպես «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի շուկա ստեղծող և անդերրայթեր: Բաժնետոմսերի երրորդ հրապարակային տեղաբաշխմանը մասնակցեցին շուրջ 130 ներդրողներ: Արդյունքում, ընկերությունը շուկայից ներգրավեց 3,649,597,860 ՀՀ դրամ ծավալով ֆինանսական ռեսուրսներ, որն աննախադեպ ցուցանիշ է ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայում:

2011թ. Բանկն ընդլայնել է ոսկով գործառնությունների տեսականին՝ իր հաճախորդներին ընձեռելով առարկայազուրկ մետաղական հաշիվների միջոցով ներդրումներ իրականացնելու հնարավորություն:

2011թ. Բանկը պահպանել է պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդես եկել որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր: Բանկը նախատեսում է շարունակել իր ակտիվ գործունեությունը ներդրումային ոլորտում, մասնավորապես, բրոքերային ծառայությունների, այդ թվում՝ միջազգային շուկաներում հաճախորդներին մատուցվող

արժեթղթերի մարժինալ գործարքների, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքների, ոսկով կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծառայությունների և այլ ոլորտներում ծավալների ավելացման, ինչպես նաև նոր պրոդուկտների ներդրման միջոցով: Որպես նոր պրոդուկտներ Բանկը նախատեսում է մշակել և ներդնել օտարերկրյա բաժնետոմսերի և դրանց ինդեքսների ֆյուչերսային պայմանագրերով գործարքների իրականացման մեխանիզմներ:

Կարևորելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ Բանկը նախատեսում է շարունակական ակտիվ գործունեություն ծավալել ինչպես առկա գործընկերների մասով համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման ու զարգացման ուղղությամբ, նպատակադրվելով առաջիկա 2-3 տարվա ընթացքում վարկային և այլ ծրագրերով համագործակցել ևս երեք միջազգային կազմակերպությունների հետ:

Բանկը, շարունակելով համագործակցությունը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) հետ, 2011թ. ընթացքում ներգրավեց և ամբողջությամբ տեղաբաշխեց ՓՄՁ վարկավորման երկրորդ տրանշը՝ 3 մլն ԱՄՆ դոլարի չափով: Առևտրի ֆինանսավորման ծրագրով հաստատված 3 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակներում Բանկն ակտիվորեն իր հաճախորդներին տրամադրեց առևտրի ֆինանսավորման գործիքներ, ինչի արդյունքում նշված սահմանաչափը գրեթե ամբողջությամբ սպառվեց և ձեռք բերվեց ՎԶԵԲ-ի նախնական համաձայնությունը 2012թ. ևս 2 մլն ԱՄՆ դոլարով սահմանաչափն ավելացնելու վերաբերյալ:

Բանկը շարունակել է համագործակցությունը FCI միջազգային ֆակտորինգային ընկերության և Գերմանահայկական հիմնադրամի ՓՄՁ վարկավորման ու «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրերի շրջանակներում:

2011թ. Բանկն ակտիվ աշխատանքներ է իրականացրել հիփոթեքային վարկավորման ծավալների ընդլայնման ուղղությամբ ինչպես Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում, այնպես էլ սեփական ռեսուրսներով:

2011թ. Բանկը ստորագրեց երկու պայմանագիր համապատասխանաբար 750,0 հազ. և 1,3 մլն ԱՄՆ դոլարի չափով:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն անցել է զարգացման որակական նոր փուլի, որտեղ զարգացման կայուն հիմքերը պահպանվելու են կուտակված փորձով, ձեռքբերված շուկայական դիրքով, հեղինակությամբ և որակյալ անձնակազմով:

Բանկի անձնակազմի անունից շնորհակալություն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդի անդամներին և Բաժնետիրոջը՝ Բանկին ցուցաբերած վստահության ու աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի անձնակազմին՝ իր նվիրված աշխատանքի համար:

Գևորգ Մաչանյան
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրիգոր Մովսիսյան
Տնօրինության անդամ
Ֆինանսական տնօրեն

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ կորպորատիվ, ներդրումային ու անհատական (corporate, investment & private) բանկային ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղություններով առաջատար բանկ դառնալու տեսլականը:

Բանկն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ ինչպես ավանդական բանկային ծառայություններով (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայությունների մատուցմամբ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում, ընձեռել նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն:

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Այդ նպատակով Բանկն իր ստեղծման օրվանից ակտիվ գործունեություն է ծավալում նշված ոլորտում մատուցվող ծառայություններն ընդլայնելու ուղղությամբ և զգալի աշխատանքներ է տանում այս ոլորտում առաջատար դիրք գրավելու համար: Արդյունքում, Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

Ֆինանսավորման և ածանցյալ գործիքների միջոցով մեր հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար Բանկն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

Բանկը, լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառույթներ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) ծառայությունների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կորպորատիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ և ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ապրանքանիշի առաջմղման գործում:

Բանկն իր հաճախորդների հետ ձևավորում է երկարատև ու գործընկերային հարաբերություններ, որոնց հիմքում ընկած է սերտ և փոխշահավետ համագործակցությունը: Արհեստավարժ, հմուտ և փորձառու անձնակազմի շնորհիվ Բանկը բացահայտում է հաճախորդների կարիքները և ժամանակին տալիս բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

Գրիգոր Հովհաննիսյան
Տնօրինության անդամ
Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. ընթացքում Բանկը բավականին ակտիվ գործունեություն է ծավալել վարկավորման բնագավառում՝ շարունակելով զարգացնել նախորդ տարիներին ձեռք բերած հաջողությունները:

2011թ. ընթացքում Բանկի վարկային պորտֆելն աճել է մոտ 56,6%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտը՝ 30,1%-ով (համեմատության համար նշենք, որ 2010թ. նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 34,4% և 38,2%):

Վարկային պորտֆելի դինամիկան վերջին հինգ տարիների ընթացքում



Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան վերջին հինգ տարիների ընթացքում



ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վարկային ռիսկի կառավարման նպատակով Բանկը մշտապես աշխատանքներ է տանում վարկային պորտֆելի՝ ըստ աշխարհագրական դիրքի և տնտեսության ճյուղերի բազմազանեցման (դիվերսիֆիկացման) ուղղությամբ, որն իր դերն ունեցավ վարկային ներդրումների և եկամտաբերության կայուն աճի մակարդակ ապահովելու գործում: Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի պատկերը.

Վարկառուների գործունեության վայր	Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում		
	31.12.09	31.12.10	31.12.11
Երևան	46,0%	47,6%	50,0%
Սյունիք	7,6%	9,4%	10,4%
Վայոց Ձոր	4,4%	4,5%	4,9%
Կոտայք	17,0%	8,5%	4,6%
ՀՀ այլ մարզեր	6,0%	6,5%	7,4%
ԼՂՀ	19,0%	23,5%	22,0%
Արտասահման	0,0%	0,0%	0,7%



Տնտեսության ճյուղեր (այդ թվում՝ ֆիզիկական անձանց վարկեր)	Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում		
	31.12.09	31.12.10	31.12.11
Արդյունաբերություն	54,2%	37,9%	38,4%
Առևտուր	16,9%	14,9%	14,9%
Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	6,1%	6,5%	5,4%
Գյուղատնտեսություն	4,5%	2,7%	2,9%
Տրանսպորտ և կապ	2,2%	3,8%	3,3%
Շինարարություն	1,3%	7,0%	7,5%
Ֆիզիկական անձանց վարկեր	8,8%	8,2%	9,5%
Ֆինանսական հատված	0,4%	8,6%	9,5%
Տնտեսության այլ ճյուղեր	5,6%	10,4%	8,6%

Վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի 31.12.11 դրությամբ



- Արդյունաբերություն
- Առևտուր
- Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ
- Գյուղատնտեսություն
- Տրանսպորտ և կապ
- Շինարարություն
- Ֆիզիկական անձանց վարկեր
- Ֆինանսական հատված
- Տնտեսության այլ ճյուղեր

Արդյունաբերության ճյուղում Բանկի վարկավորած սեգմենտներից կարելի է առանձնացնել էներգետիկան, որտեղ վարկային ներդրումները կազմում են պորտֆելի ավելի քան 20%-ը (արդյունաբերության ճյուղի ավելի քան 50%-ը):

Հարկ է նշել, որ էներգետիկայի, մասնավորապես, վերականգնվող էներգիայի արտադրության ոլորտի մասնաբաժնի էական կշիռը պայմանավորված է Բանկի կողմից տվյալ բնագավառում կատարված բազմամյա լուրջ աշխատանքով և Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևոր նշանակությամբ: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում այս ասպարեզի բոլոր վարկային ծրագրերին, տեղական և միջազգային բիզնես-գործընթացներին ու սեմինարներին, ինչպես նաև պարբերաբար աշխատանքներ է տանում այս ուղղությամբ արհեստավարժ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման և անկախ փորձագետների/խորհրդատուների հետ համագործակցության միջոցով հնարավոր ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում Բանկն աննախադեպ միջոցառումներ է իրականացրել ինչպես սեփական բիզնես գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու, այնպես էլ վարկային ռիսկը կանխարգելելու և զսպելու ուղղությամբ: Դրանցից հատկանշական են հետևյալները.

Վարկավորման ստորաբաժանման կառուցվածքում ստեղծվեց Մոնիթորինգի և ներքին հսկողության բաժինը, վերանայվեցին վարկավորման գործընթացը կանոնակարգող ներքին ակտերը, ամրապնդվեց ստորաբաժանման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը: Նշված միջոցառումների արդյունքում հաջողվեց էապես բարելավել վարկային ներդրումների որակական ցուցանիշները, այն է՝ դասակարգված (խնդրահարույց) վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում նվազեց՝ կազմելով ընդամենը 1.3% (31.12.2010թ. դրությամբ այն մոտ 6.9% էր):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

Բանկը կարևորում է տեղական և միջազգային վարկատու կազմակերպությունների հետ համագործակցությունը, քանի որ այն բացի կայուն և մատչելի միջոցների աղբյուր լինելուց, նպաստում է նաև Բանկի աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության և ամենատարբեր ներդրողների ու գործընկերների շրջանում Բանկի հեղինակության բարձրացմանը: Այս տեսանկյունից Բանկի ռազմավարական գործընկերներն են՝

► **Գերմանահայկական հիմնադրամի ԾԿԳ-ն**, որի հետ Բանկը համագործակցում է 2 վարկային ծրագրերի շրջանակներում: Առաջինը «Վերականգնվող էներգետիկայի զարգացման ֆինանսավորում» ծրագիրն է, որում Բանկը ներգրավվել է դեռևս 2006թ., և որի շրջանակներում հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի ընդգծված առաջատարներից, իսկ երկրորդը՝ «Փոքր և միջին բիզնեսի զարգացում» ծրագիրը, որին Բանկը մասնակցում է 2009թ. և կրկին հանդիսանում է ծրագրի ակտիվ և հուսալի գործընկերներից: Նշված 2 ծրագրով էլ Բանկն ակնկալում է էական աճ արձանագրել մոտակա տարիներին:

► **Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ)**, որի հետ գործընկերության հիմքերը դրվել են դեռևս 2010թ.: Այդ տարի կնքվել է 5 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր՝ Փոքր և Միջին Ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկավորման և 3 մլն ԱՄՆ դոլարի համաձայնագիր՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրերի (ԱՖԾ) իրականացման նպատակով: 2011թ. Բանկը գրեթե ամբողջությամբ տեղաբաշխել է ստացված միջոցները, և ակնկալվում է 2012թ. խորացնել ու ընդլայնել համագործակցությունն ինչպես ներգրավված միջոցների ավելացման ուղղությամբ, այնպես էլ համատեղ նոր ծրագրեր իրականացնելու գործում:

► Շվեյցարական **«Ատլանտիկ ֆորֆեյթինգ Էյ Ջի»** կազմակերպությունը, որի հետ համագործակցության հիմքը դրվեց 2011թ. և 750,000 ԱՄՆ դոլարի ֆինանսավորման համաձայնություն ձեռք բերվեց, ինչն իր հերթին հնարավորություն ընձեռեց Բանկին՝ «Առևտրի ֆինանսավորման ծրագրի» շրջանակներում հաճախորդներին տրամադրել գրավիչ պայմաններով միջնաժամկետ վարկեր:

► **Հայաստանի Փոքր և Միջին Ձեռնարկությունների Զարգացման Ազգային Կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ)**, որի հետ Բանկը համագործակցում է սկսած 2009թ. և տրամադրում վարկեր ՀՀ փոքր և միջին ձեռնարկություններին այն դեպքում, երբ վերջիններիս կողմից առաջարկվող ապահովման միջոցները բավարար չեն պահանջվող գումարը ստանալու համար: ՓՄՁ ԶԱԿ-ը համապատասխան ուսումնասիրությունից հետո, Բանկին տրամադրում է միջոցներ՝ Բանկի վարկի վերադարձելիության ռիսկը ծածկելու նպատակով: Կազմակերպությունն անընդհատ բարելավում է իր կողմից մատուցվող ծառայությունների պայմանները, ինչը նպաստում է երկկողմ համագործակցության շրջանակների ընդլայնմանը:

► 2011թ. ընթացքում Բանկը վերանայել է իր մոտեցումները որոշ մանրածախ ծառայությունների վերաբերյալ, որոնց շարքին են դասվում, մասնավորապես, հիփոթեքային վարկերը: Դրա հիմնական շարժառիթը Բանկի գործող և հավանական հաճախորդների սպասարկման համապարփակ պահանջների լիարժեք բավարարումն է: Սակայն, այն հնարավոր չէր ապահովել բացարձակապես Բանկի սեփական միջոցների հաշվին՝ ֆինանսական համակարգում թեժ մրցակցային պայմանների առկայության պարագայում և Բանկի կողմից որոշում կայացվեց անդամակցել **«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»** ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրին, որի շնորհիվ հնարավորություն ընձեռվեց տրամադրելու երկարաժամկետ հիփոթեքային վարկեր՝ ազգային արժույթով: Արդյունքում, Բանկի հիփոթեքային վարկերի ծավալը տարեվերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճեց 161.9%-ով՝ հասնելով 1.723,4 մլն ՀՀ դրամի:

ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գևորգ Խաչատրյան
Տնօրինության անդամ
Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

ՖԱԿՏՈՐԻՆԳ

2011թ. Բանկին հաջողվեց պահպանել ֆակտորինգի պորտֆելի շարունակական աճը: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացված ներքին ֆակտորինգային գործարքների ծավալը կազմել է մոտ 5.4 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 36%-ով: Ինչ վերաբերում է տարվա ընթացքում ֆակտորինգից ստացված եկամտին, ապա այն նախորդ տարվա համեմատ աճել է 44%-ով:

Ներքին ֆակտորինգի գործարքների ծավալը



Տարվա ընթացքում ֆակտորինգային գործարքների ծավալի աճին զգալիորեն նպաստեց Դեբիտորական պարտքի ֆինանսավորում (փակ ֆակտորինգ) ծառայության մատուցումը, որը Բանկի կողմից ներդրվել էր 2010թ. վերջերին:

2011թ. Բանկի կողմից մշակվեց և հաճախորդներին առաջարկվեց նոր ֆակտորինգային ծառայություն՝ «Ֆակտորինգ-երաշխիք», որի գծով ակտիվ գործարքներ են ակնկալվում 2012թ. ընթացքում:

2011թ. ընթացքում Բանկը զգալիորեն դիվերսիֆիկացրեց ֆակտորինգի պորտֆելը՝ ներգրավելով դեբիտորներ նոր ոլորտներից: Այսպես, տարվա վերջի դրությամբ ֆակտորինգի պորտֆելի ճյուղային կառուցվածքը ուներ հետևյալ տեսքը (ըստ դեբիտորների) (տես էջ 10):

Ներքին ֆակտորինգի պորտֆելի ճյուղային կառուցվածքը



Տարվա վերջի դրությամբ Բանկի ֆակտորինգային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը 57 էր, իսկ դեբիտորներինը՝ 22: Ստորև ներկայացված է ֆակտորինգի հաճախորդների և դեբիտորների քանակի դինամիկան:

Հաճախորդների և դեբիտորների քանակի դինամիկան



ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Բանկը 2011թ. խորացրեց Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ համագործակցությունը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում՝ իրականացնելով միջազգային առևտրի ֆինանսավորում, ակրեդիտիվների և բանկային երաշխիքների թողարկում: Միաժամանակ, Բանկը սկսեց համագործակցել նաև «Ատլանտիկ ֆորֆեյթինգ Էյ Ջի» ընկերության հետ՝ միջազգային առևտրի գործարքների ֆինանսավորման ոլորտում, որի հետ համագործակցության խորացում է ակնկալվում 2012թ.:

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը Բանկին հնարավորություն ընձեռեց առաջարկել մրցունակ պայմաններով առևտրի ֆինանսավորման գործիքներ՝ ներգրավելով նոր հաճախորդներ: Մասնավորապես, Բանկը առավել ակտիվություն ցուցաբերեց ներմուծման գործարքների ֆինանսավորման ոլորտում, որոնք տրամադրվեցին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ կնքված վերականգնվող վարկային պայմանագրի շրջանակներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հատկացված սահմանաչափը գրեթե ամբողջությամբ տեղաբաշխված է եղել, 2012թ. ակնկալվում է սահմանաչափի ավելացում: 2011թ. ընթացքում միջազգային առևտրի ֆինանսավորման ոլորտում իրականացված գործարքների ծավալը կազմել է մոտ 4,1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 2,5 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարեն Տուրյան
Տնօրինության անդամ
Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

2011թ. ընթացքում կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում Բանկի գլխավոր ձեռքբերումը եղել է 3,649,597,860 ՀՀ դրամ ծավալով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ՝ երրորդ թողարկման տեղաբաշխումը: Բանկը հանդես է եկել որպես տեղաբաշխման կազմակերպիչ և հաշվարկային բանկ: Բանկի ջանքերով տեղաբաշխվել է Ընկերության թվով 3,287,926 հատ հասարակ անվանական բաժնետոմս: Դա ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի պատմության մեջ իրականացված աննախադեպ հրապարակային առաջարկ (IPO) էր իր ծավալներով և ընդգրկմամբ: Ընդ որում, տեղաբաշխված բաժնետոմսերի շուրջ 69 տոկոսը կամ մոտ 2,5 մլրդ ՀՀ դրամի բաժնետոմսեր ձեռք են բերվել օտարերկրյա ներդրողների կողմից: Տեղաբաշխումն իրականացվել է երկու փուլով՝ գործող բաժնետերերի նախապատվության իրավունքով բաժնետոմսերի ձեռքբերմամբ և ազատ բաժանորդագրության միջոցով: Բանկն աջակցել է Ընկերությանը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում և ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ում բաժնետերերի կողմից բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման և սեփականատերերի անձնական հաշիվներին բաժնետոմսերի փոխանցման գործում:

Սկսած 2011թ. դեկտեմբերի 27-ից՝ Բանկի ջանքերով «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը նույնպես ցուցակվում են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայի բաժնետոմսերի երկրորդային /B/ ցուցակում:

Բացի բուն տեղաբաշխման ծառայություններից, Բանկը մատուցում է նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երկրորդային շուկայի ակտիվացման (իրացվելիության ապահովման) ծառայություններ՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում իրականացնելով բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ և հանդես գալով որպես Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծող (մարքեթ-մեյքեր): 2011թ. ընթացքում Բանկի միջնորդությամբ Ընկերության բաժնետոմսերով իրականացվել է 28 գործարք՝ շուրջ 36 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչը կազմում է 2011թ. ընթացքում բաժնետոմսերով համախառն բորսայական գործարքների 18 տոկոսը:

Ինչ վերաբերում է կորպորատիվ պարտատոմսերի շուկային, ապա հարկ է նշել, որ կորպորատիվ պարտատոմսերի թողարկումներին խոչընդոտում էր պետական պարտատոմսերի շուկայի բարձր եկամտաբերությունը: Էժան վարկային ռեսուրսների հասանելիության պայմաններում, թողարկողների տեսանկյունից նվազել էր կոպորատիվ պարտատոմսերի՝ որպես ֆինանսավորման ռեսուրսների ներգրավման գործիքի, գրավչությունը:

Արդյունքում, 2011թ. ընթացքում Բանկի կողմից կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխումներ չեն իրականացվել, փոխարենը, Բանկի կողմից շարունակվել են իրականացվել շրջանառության մեջ գտնվող թողարկումների գծով մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկումը: Մասնավորապես, իրականացվել են «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ-ի և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի 3-րդ թողարկման պարտատոմսերի մայր գումարի մարումները և արժեկտրոնների վճարումները, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողներին և մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ: Բացի դրանից, հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է իր կողմից տեղաբաշխված կորպորատիվ արժեթղթերի գնանշումները Bloomberg միջազգային տեղեկատվական համակարգում՝ իր պաշտոնական ASWI տեղեկատվական էջում:

2011թ. ընթացքում Բանկը շարունակել է մատուցել նաև խորհրդատվական ծառայություններ իր կորպորատիվ հաճախորդների կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի շուրջ:

ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

► Բանկը 2011թ. ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես՝ տարվա ընթացքում արժեթղթերի առաջնային շուկայում Բանկն իրականացրել է ավելի քան 18 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ, իսկ երկրորդային շուկայում՝ ավելի քան 19 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ: Պատահական չէ, որ 2011թ. «ԱՐՄԻՆՖՈ» լրատվական գործակալության կողմից առաջադրված Պետական արժեթղթերի շուկայում առևտրային բանկերի ակտիվության և Կորպորատիվ պարտքի շուկայում առևտրային բանկերի ակտիվության անվանակարգերում ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը ճանաչվել է որպես լավագույն բանկ:

Նկատվել է կորպորատիվ պարտատոմսերով գործարքների ծավալի նվազում, որը պայմանավորված է նոր թողարկումների բացակայությամբ՝ կապված այս շուկայում առկա հետճգնաժամային հիմնախնդիրներով, մասնավորապես, պարտատոմսերի շուկայում եկամտաբերությունները ներկայումս ավելի բարձր են, քան տնտեսության իրական հատվածում գործող ձեռնարկությունների կողմից ներգրավվող վարկերի տոկոսադրույքները: Այս հանգամանքը նվազեցրել է ընկերությունների կողմից կորպորատիվ պարտատոմսերի թողարկման գրավչությունը: Բանկը ՀՀ բաժնետոմսերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2011թ. ընթացքում ևս իրականացրել է այդ ընկերության բաժնետոմսերի երկկողմանի գնանշում՝ կնքելով 31,727 հատ բաժնետոմսի (35,357,070 ՀՀ դրամի) առք ու վաճառքի գործարք:

2011թ. ընթացքում Բանկը շարունակել է իր հաճախորդներին տրամադրել, ինչպես նաև այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավել դրամական միջոցներ՝ օգտագործելով ռեպո գործիքը, որոնցով իրականացված գործարքների ծավալը կազմել է 165,0 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշն աճել է գրեթե 30 տոկոսով, որը հիմնականում ուղղված է եղել Բանկի ներդրումային պորտֆելի ավելացմանը:

► 2011թ. ընթացքում Բանկը ներդրումային պորտֆելի համալրման նպատակով պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել մոտ 14.2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: Այս ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է մոտ երկու անգամ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011թ. ընթացքում Բանկն ավելի ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված հետգնումներին՝ վաճառելով մոտ 4,0 մլրդ ՀՀ դրամ ծավալով պարտատոմսեր, ինչպես նաև երկրորդային շուկայում՝ վաճառելով 5,0 մլրդ ՀՀ դրամ ծավալով ավելի պարտատոմսեր, քան գնել էր: Արդյունքում, հաշվի առած նաև պարտատոմսերի մարումները, 2011թ. Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալն աճել է մոտ 4,6 մլրդ ՀՀ դրամով, պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2010թ. համեմատ աճել է մոտ 30 տոկոսով և կազմել 1.757,0 մլն ՀՀ դրամ, իսկ պարտատոմսերի առք ու վաճառքից ստացված եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 55 տոկոսով՝ կազմելով շուրջ 61,0 մլն ՀՀ դրամ: Բանկը 2011թ. պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամուտի դինամիկան ներկայացված է գծապատկերում (տես էջ 13):

► Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջբանկային արտարժութային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 128,0 մլրդ ՀՀ դրամ: 2011թ. Բանկը շարունակել է կիրառել արտարժութային սվոփ գործիքը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է շուրջ 51,0 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ:

Ներդրումային պորտֆելի կառուցվածքը և եկամտաբերության մակարդակը



► Հատկանշական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների (հաշվի չառած բանկերի հետ գործարքները) հետ նույնպես իրականացրել է սվոփ և ֆորվարդ գործարքներ, որոնց ծավալը 2011թ. ընթացքում կազմել է համապատասխանաբար՝ 1,0 մլրդ և 53,0 մլն ՀՀ դրամ:

► Բանկը 2011թ. շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել թանկարժեք մետաղների ներքին շուկայում՝ պահպանելով ՀՀ ֆինանսական համակարգում իր առաջատար դիրքը և ապահովելով ՀՀ բանկային համակարգում նշված գործառնությունների գծով ծավալների գերակշիռ մասը: Տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացվել է շուրջ 25,5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով թանկարժեք մետաղներով առք ու վաճառքի գործառնություններ: Հարկ է նշել նաև, որ 2011թ. երկրորդ կեսին Բանկն իր հաճախորդներին սկսել է մատուցել առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման ծառայություններ, որոնցով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը մինչև տարեվերջ կազմել է մոտ 233,5 մլն ՀՀ դրամ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի, արտարժութային ֆորվարդների և ավանդային տոկոսադրույքների գնանշում Reuters համակարգում, ինչպես նաև ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերի, արտարժութային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg տեղեկատվական համակարգում՝ Բանկի պաշտոնական կայք էջերում:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ինչպես ՀՀ տարածքում (բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ ու վարկեր), այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 12,0 մլրդ և 25,0 մլրդ ՀՀ դրամ:

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բանկի գործունեության ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների բաժնետոմսեր ու դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործառնություններ և մարժինալ գործարքների կնքման հնարավորություն:

Ներդրումային ծառայությունների ոլորտում Բանկը բավականին մեծ ձեռքբերումներ է ունեցել 2011թ. ընթացքում: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2010թ. համեմատությամբ աճել է մոտ 13 տոկոսով: Գործարքներ են կնքվել արտասահմանյան բորսաներում շրջանառվող առաջատար ընկերությունների բաժնետոմսերով և դեպոզիտար ստացականներով: Ընդհանուր առմամբ, 2011թ. ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիման վրա իրականացվել է թվով 1,137 բրոքերային գործարք՝ 10,9 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով, որը շուրջ 75 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Վերոնշյալ ծավալի գերակշիռ մասը՝ 10,8 մլրդ ՀՀ դրամը, բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին:

2011թ. ընթացքում Բանկն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններին: Այսպես, Բանկն իր հաճախորդների հանձնարարականներով ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-ում կորպորատիվ արժեթղթերով իրականացրել է 32,0 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով բրոքերային գործարքներ:

Արդյունքում, 2011թ. ընթացքում Բանկը բրոքերային գործարքներից ստացել է 10,8 մլն ՀՀ դրամ միջնորդավճար: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 27 տոկոսով:

2011թ. ընթացքում Բանկն իր հաճախորդներին շարունակել է առաջարկել օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքներ, որոնցով իրականացված գործառնությունների ծավալը տարվա ընթացքում կազմել է 2,2 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 2,1 մլրդ ՀՀ դրամի համեմատությամբ, իսկ նշված գործարքներից եկամուտը հաշվետու տարվա համար կազմել է 3,4 մլն ՀՀ դրամ:

2011թ. Բանկն իր հաճախորդներին սկսել է մատուցել օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման ծառայություններ, ինչը ենթադրում է հաճախորդներին լրացուցիչ ֆինանսավորման տրամադրում՝ արժեթղթեր ձեռք բերելու նպատակով: Արդյունքում, տարվա ընթացքում Բանկի հաճախորդներն իրականացրել են 1,4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով մարժինալ գործարքներ, որոնցից Բանկի ստացած եկամուտը կազմել է 2,8 մլն ՀՀ դրամ:

Բանկի կողմից մատուցված ներդրումային ծառայությունների ծավալների և ստացված եկամուտների դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.

Ներդրումային ծառայությունների ծավալները և ստացված եկամուտները (մլն ՀՀ դրամով)



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մանվել Խաչիյան
Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի տնօրեն

Բանկը մշտապես կատարելագործում է SS ենթակառուցվածքները և որպես իր մշտական և շարունակական խնդիր՝ ապահովում է տեղեկատվության ամբողջականությունը, ենթակառուցվածքների աշխատանքների անընդհատությունը, ինչպես նաև արդիական համակարգերի ժամանակին տեղադրումն ու կիրառումը:

Բանկը 2011թ. իրականացրել է մի շարք միջոցառումներ անվտանգության բարձրացման նպատակով՝ առաջնորդվելով միջազգայնորեն ընդունված COBIT, ISO 27001, ISO 17799 ստանդարտներով: Մասնավորապես, վերախմբավորվել են տեղեկատվական անվտանգությանը վերաբերող մի շարք ներքին ակտեր, վերանայվել են օգտագործողների իրավասությունները համակարգերում և վերահսկվել է դրանց տրամադրումը օգտագործողներին, մոնիթորինգի են ենթարկվել տեղեկատվական համակարգերը և կատարվել վերլուծություններ:

Տեղադրվել է նոր Intrusion Prevention անվտանգության համակարգը: Ներքին ցանցը ավելի ապահով ու կառավարելի դարձնելու նպատակով ներդրվել են մի շարք մոնիթորինգային համակարգեր: Այդ ամենն ուղղված է բարձրացնելու Բանկում առկա համակարգերի անխափան աշխատանքը:

Swift միջազգային վճարահաշվարկային համակարգում կատարվել է Swift Alliance փաթեթի թարմացում Release 6-ից 7 համակարգի, որն ունի մի շարք առավելություններ նախկին տարբերակի համեմատ:

Բանկում կատարվել են մի շարք ավտոմատացման գործընթացներ, որոնք ուղղված են եղել նվազեցնելու մարդկային ռիսկի գործոնը:

Բանկում 2011թ. տեղադրվել է ՀԾ-Ինտերնետ-Բանկ համակարգը: Այն հնարավորություն է տալիս Բանկի հաճախորդներին սպասարկվել աշխարհի ցանկացած կետից, ցանկացած պահի ինտերնետի միջոցով՝ առանց մեծ ծախսերի, ապահով և անվտանգ, օգտվել Բանկի կողմից մատուցվող հիմնական ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու: Ինտերնետային կայքի անվտանգությունն ապահովելու համար տեղադրվել են միջազգային մեծ ճանաչում ունեցող VeriSign կազմակերպության սերտիֆիկատները:

2011թ. տեղադրվեցին համապատասխան ցանցային սարքավորումներ, որոնց շնորհիվ հնարավոր եղավ Բանկում ցանցը ֆիզիկապես տարանջատել մեկը մյուսից՝ բարձրացնելով ցանցի թողունակությունը և անվտանգությունը:

Բանկը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2011թ. ընթացքում, կարևորել է ռիսկերի նվազեցումը, որի հիմնական ուղղություններն են փոխարինելիության ապահովումը (անձերի և համակարգերի), տեղեկատվական տեխնոլոգիաների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին (COBIT, ISO 27001) ու վերջիններիս կիրառումը:

Սիրանուշ Թորգոմյան
Ռիսկերի կառավարման բաժնի պետ

Բանկի կառավարման մարմինները մշտապես կարևորել են Բանկի ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Բանկի Խորհուրդը, Տնօրինությունը, Գործադիր տնօրենը, ինչպես նաև Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են ռիսկերի կառավարման ոլորտում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերի գնահատման և ներդրման մի մասը:

Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն, Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ: Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որն իր որդեգրած քաղաքականության շրջանակներում հաստատում է սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային, շուկայական և այլ ռիսկերը:

Բանկում գործում է Ռիսկերի կառավարման առանձին ստորաբաժանում, որն անկախ է գործարքներ կատարող ստորաբաժանումներից և իրականացնում է ինչպես ընթացիկ, այնպես էլ որոշակի պարբերականությամբ հսկողություն Բանկի գործառնությունների նկատմամբ՝ ուսումնասիրելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտի նպատակային ցուցանիշներին (benchmark):

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության ու գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հիմնված ռիսկերի գնահատման ու զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը և սահմանաչափերը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության համար պարբերաբար կիրառվում են սթրես թեստերի մոդելներ: Բանկում գործում են վարկային ռիսկի գնահատման մեթոդական ուղեցույցներ: Արտարժութային ռիսկը հեջավորվում է արտասահմանյան գործընկերների կողմից տրամադրվող գործիքակազմի միջոցով, ածանցյալ գործիքների համար սահմանվում են սահմանաչափեր՝ համաձայն Բանկում գործող կարգի: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը՝ ժամկետայնության ճեղքվածքի (GAP) մոդելը:

Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով և հնարավոր կորուստները ծածկելու համար Բանկում գործում են ապահովագրական փաթեթներ (BBB, շենքի և գույքի ապահովագրություն):

Բանկը միջազգայնորեն ընդունված սկզբունքներով իրականացնում է պայքար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ՝ համակողմանիորեն ուսումնասիրելով Բանկի հաճախորդներին, գործընկերներին ու շահառուներին:

Արկադի Փինաչյան
Ներքին աուդիտի ղեկավար

Բանկի Ներքին աուդիտն իր հերթին ուսումնասիրում է Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերը, գնահատում է դրանց նվազեցման և կանխարգելման նպատակով ձևավորված ներքին հսկողության մեխանիզմների բավարարությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև ստուգում է Բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

Ներքին աուդիտն իր աշխատանքները կազմակերպում է Բանկի Խորհրդի կողմից հաստատված Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա՝ ծրագրային ստուգումներ և սեփական նախաձեռնությամբ արտածրագրային ստուգումներ իրականացնելու միջոցով: Բանկի ներքին հսկողության համակարգի կատարելագործման նպատակներից ելնելով Ներքին աուդիտն իր աշխատանքները կառուցում է նաև Բանկի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների հետ սերտ համագործակցություն ձևավորելու միջոցով: Հատկանշական է այն, որ Ներքին աուդիտի կողմից 2011թ. ընթացքում ամբողջությամբ իրականացվեցին Բանկի խորհրդի կողմից հաստատված ծրագրային միջոցառումները:

2011թ. ընթացքում Ներքին աուդիտը համագործակցել է ՎՀԵԲ-ի խորհրդատուների հետ Ներքին աուդիտի գործունեության միջազգային փորձի փոխանակման և Բանկում ներքին աուդիտի կատարելագործման ուղղությամբ, որի շրջանակում քննարկվել են նաև Ներքին աուդիտի կողմից ռիսկերի բացահայտման և գնահատման ընդհանուր մոտեցումներն ու դրանց ներդրման հնարավորությունները Բանկում:

Հիմք ընդունելով Ներքին աուդիտի գործունեության բնագավառում Բանկում ձևավորված փորձը և փորձագիտական եզրակացությունները, 2011թ. ընթացքում լրամշակվել են Ներքին աուդիտի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը:

Քրիստինա Դադայան
Աշխատակազմի ղեկավար

Անձնակազմի կառավարման քաղաքականության նպատակն է Բանկում անձնակազմի կառավարման որակի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և անձնակազմի պատասխանատու, ստեղծագործական աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Մասնավորապես, Բանկը կարևորում է կադրերի ծառայողական առաջխաղացման գործոնը, այն է՝ աշխատակիցների համար ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները մասնագիտական աճի, նոր գիտելիքների ձեռքբերման, նոր հմտությունների տիրապետման, ինչպես նաև սոցիալական բարեկեցության համար:

Բանկի գործառնությունների աճին զուգընթաց փոփոխվել է նաև Բանկի անձնակազմի կառուցվածքը և կազմը: 2011թ. ընթացքում Բանկը համալրել է իր անձնակազմը ինչպես փորձառու կադրերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (15 նոր աշխատակից): 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 91: Աշխատակիցների միջին տարիքը 31 է:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը՝ փոփոխվող օրենսդրական դաշտի յուրացման, տեխնոլոգիաների, ինստիտուցիոնալ գործընկերների հետ համագործակցության ուղիների ուսումնասիրման և այլ ուղղություններով:

2011թ. ընթացքում Բանկի 42 աշխատակից մասնակցել է 57 սեմինարի, պրեզենտացիայի, կոնֆերանսի ՀՀ տարածքում, արտասահման է գործուղվել 5 աշխատակից՝ մասնակցելու միջազգային կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև Բանկում կազմակերպվել են 32 ներքին սեմինար: 2011թ. ընթացքում Բանկի 2 աշխատակից բարեհաջող հանձնել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) և Առևտրի միջազգային պալատի (ICC) կողմից առևտրի ֆինանսավորման ոլորտում կազմակերպված որակավորման քննությունները:

Բանկի աշխատակիցների կողմից ներկայացվել են մի շարք վերլուծական աշխատանքներ՝ Բանկին առնչվող խնդիրների վերաբերյալ:

Բանկի սոցիալական փաթեթի շրջանակներում ներդրված առողջության ապահովագրությանը 2011թ. ընթացքում մասնակցեց Բանկի աշխատակիցների շուրջ 80%-ը:

Բանկի աշխատակիցների համար կազմակերպվել են կորպորատիվ միջոցառումներ, արշավներ, երեկույթներ և այլն: Այս ամենը նպաստել է աշխատակիցների միջև միջանձնային հարաբերությունների ամրապնդմանը՝ ձևավորելով համագործակցության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ ու թիմային առողջ ոգի:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

ԿԱՌԱՎԱՐՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԱՌ 31.12.2011Թ.



Հայկ Մկրտչյան
Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

2011թ. Բանկն ակտիվացրել է մարքեթինգային միջոցառումները ինչպես գործող, այնպես էլ նոր ծառայությունների առաջմղման գծով:

Բանկն ամբողջությամբ ձևափոխել է իր կայք էջի դիզայնը և կառուցվածքը, ինչի արդյունքում կայքը դարձել է ավելի ինֆորմատիվ և գրավիչ: Կայքը պարունակում է Բանկի բիզնես-փիլիսոփայության, հիմնական արժեքների, մատուցվող ծառայությունների, Բանկի ղեկավարության, ինչպես նաև Բանկի գործունեության վերաբերյալ այլ անհրաժեշտ տեղեկություններ: Կայքը նաև տեղեկատվություն է տրամադրում տեղական և միջազգային ֆինանսական շուկաների հիմնական գործիքների վերաբերյալ: 2011թ. բավականին լայն զարգացում է ստացել ինտերնետային մարքեթինգը, որի արդյունքում տարբեր տեղեկատվական և մասնագիտացված վեբ-կայքերում տեղադրվել են Բանկի ծառայությունները ներկայացնող գովազդային վահանակներ՝ հղումով Բանկի ինտերնետային կայքին:

2011թ. Բանկն իրականացրել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի 3-րդ թողարկման հետ կապված առաջմղման մարքեթինգային միջոցառումներ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում, մասնավորապես՝ Ֆրանսիայի Մարսել քաղաքում ներդրողների ներգրավման նպատակով:

Իրականացվել է նաև Բանկի տարբեր ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող պաստառների ձևավորում և տպագրություն, որոնք նախատեսված են ցուցահանդեսներում, խոշոր բիզնես-կենտրոններում տեղադրելու համար:

2011թ. թարմացվել են Բանկի կողմից մատուցվող ծառայությունները ներկայացնող բուկլետների դիզայնը և բովանդակությունը, իսկ առաջարկվող բանկային նոր ծառայություններին զուգահեռ՝ մշակվել և տպագրվել են նոր բուկլետներ: Բանկն իրականացրել է նաև մարքեթինգային վերլուծություններ, ուսումնասիրել է ՀՀ բանկային շուկան և մրցակիցների ծառայություններն ու առաջարկվող սակագները, որից ելնելով մշակել է իր սակագնային քաղաքականությունը:

2011թ. ստեղծվեց Բանկի գործունեության յոթ տարիների պատմությունը և ձեռքբերումները նկարագրող տեսաֆիլմ:

Իրականացվեցին աշխատանքներ Բանկի նպատակային խմբերի հետ՝ ուղղված հաճախորդների կարիքների բացահայտմանը, հաճախորդների հետ արդյունավետ փոխադարձ կապի ապահովմանը, «փրայվիթ» բանկային ծառայությունների աստիճանական ներդրմանը, սպասարկման նոր տեխնոլոգիաների կիրառմանը, առկա հաճախորդներից յուրաքանչյուրին մատուցվող ծառայությունների դիվերսիֆիկացմանը: Նոր հաճախորդների ներգրավման նպատակով շարունակվել է հաճախորդների հետ անմիջական հանդիպումների (Դայրեքթ մարքեթինգի) արդյունավետ կիրառումը:

Պոտենցիալ հաճախորդների բացահայտման և հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ և սեմինարներ վերջիններիս հետ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սեդրակ Բաղդասարյան
Տնօրինության անդամ
Հաշվապահական
հաշվառման և հաշվետվությունների
դեպարտամենտի տնօրեն
Գլխավոր հաշվապահ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն ավարտել է իր գործունեության յոթերորդ տարին՝ բոլոր հիմնական ցուցանիշների գծով գրանցելով էական աճ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 12,8 մլրդ ՀՀ դրամով կամ 36%-ով՝ կազմելով 47,9 մլրդ ՀՀ դրամ: Ակտիվների կազմում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Հաճախորդներին տրված վարկերն աճել են 8,8 մլրդ ՀՀ դրամով, հետգնման պայմանագրերով գրավադրված (վաճառված՝ հետ գնելու պայմանով) արժեթղթերը աճել են 6,1 մլրդ ՀՀ դրամով:

Ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում վարկերը՝ 46%, արժեթղթերը՝ 33%, միջբանկային ավանդները՝ 9% և ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը՝ 11%, ինչը պայմանավորված է շուկայական գործիքների (միջազգային վարկեր, ռեպո և այլ գործիքներ) մեծ ծավալներով, որի պարագայում Բանկին անհրաժեշտ է ունենալ բարձր իրացվելիություն:

Ակտիվների կառուցվածքը և դինամիկան



Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 11,4 մլրդ ՀՀ դրամով կամ 43%-ով՝ կազմելով մոտ 37,5 մլրդ ՀՀ դրամ:

Պարտավորությունների կազմում նույնպես տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն աճել են 800,0 մլն ՀՀ դրամով, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների նկատմամբ՝ 3,7 մլրդ դրամով:

Պարտավորությունների կառուցվածքը և դինամիկան



Ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցներ

Հաճախորդներից ներգրավված միջոցներ

Այլ պարտավորություններ

Հաշվետու տարվա ընթացքում բանկի զուտ տոկոսային եկամուտները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 26%-ով կամ 555,0 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 2,3 մլրդ ՀՀ դրամ: Վարկերից և արժեթղթերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտներում կազմել է 95%:

2011թ. Բանկի զուտ շահույթը կազմել է մոտ 1.2 մլրդ ՀՀ դրամ: 2010թ. համեմատությամբ շահույթն աճել է 246,0 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է Բանկի եկամտաբեր ակտիվների, ՀՀ պետական պարտատոմսերի տարեկան եկամտաբերության աճով: Արդյունքում, Բանկի ստեղծման օրվանից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կուտակված չբաշխված շահույթը կազմել է ավելի քան 2.2 մլրդ ՀՀ դրամ, որի մեջ չի ներառված նույն ամսաթվի դրությամբ զուտ շահույթի հաշվին գլխավոր պահուստին կատարված 1.0 մլրդ ՀՀ դրամի չափով հատկացումը:

2011թ. վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է մոտ 10.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 18%-ով, որը պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածի շահույթով:

Բանկի տարեկան շահույթի դինամիկան և շահութաբերության ցուցանիշները



Տարեկան շահույթ

ROE

ROA

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

Անկախ աուդիտորի եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և Խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 24 փետրվարի 2012թ-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆիանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան:

Grant Thornton
An instinct for growth™

Եզրակացություն

Մեր կածիքով 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումն են՝ բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արմեն Վանյան
Աուդիտի ղեկավար

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
24 փետրվարի 2012թ.
ք. Երևան

«ГРАНТ ТОРНТОН» ՓԲԸ
«GRANT THORNTON» CJSC
«ГРАНТ ТОРНТОН» ՓԲԸ
00040569

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**2011թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար**	2010թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**4,326,816**	3,316,153
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	**(2,038,730)**	(1,583,504)
Զուտ տոկոսային եկամուտներ	**2,288,086**	1,732,649
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**150,532**	92,897
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**(22,143)**	(13,049)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**128,389**	79,848
Զուտ առևտրային եկամուտ	**128,796**	68,960
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ	**60,788**	39,184
Այլ եկամուտներ	**99,728**	74,465
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	**(300,706)**	(42,528)
Անձնակազմի գծով ծախսեր	**(580,023)**	(480,447)
Հիմնական միջոցների մաշվածություն	**(55,020)**	(57,944)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	**(7,698)**	(6,529)
Այլ ծախսեր	**(258,343)**	(202,096)
Շահույթ մինչև հարկում	**1,503,997**	1,205,562
Շահութահարկի գծով ծախս	**(305,114)**	(252,571)
Տարվա շահույթ	**1,198,883**	952,991
Այլ համապարփակ եկամուտ		
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)	**275,477**	(186,985)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս	**31,254**	196,158
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**(61,346)**	(1,834)
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	**245,385**	7,339
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**1,444,268**	960,330

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկ. 31-ի դրությամբ	2010թ. դեկ. 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	**5,694,191**	4,040,968
Թանկարժեք մետաղներ	**49,542**	153,785
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**3,693,617**	4,368,441
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**20,764**	20,644
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**21,841,997**	13,034,621
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**4,381,926**	7,347,074
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**11,442,926**	5,320,918
Հիմնական միջոցներ	**648,561**	619,868
Ոչ նյութական ակտիվներ	**43,784**	50,354
Հետաձգված հարկային ակտիվ	**-**	16,306
Այլ ակտիվներ	**161,448**	191,233
Ընդամենը՝ ակտիվներ	**47,978,756**	35,164,212
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	**11,977,387**	5,661,265
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**5,506**	10,716
Առևտրային պարտավորություններ	**798,055**	-
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**8,584,986**	7,936,890
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**15,740,237**	12,313,526
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	**104,576**	127,913
Հետաձգված հարկային պարտավորություն	**61,929**	-
Այլ պարտավորություններ	**232,044**	84,134
Ընդամենը՝ պարտավորություններ	**37,504,720**	26,134,444
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	**7,002,000**	7,002,000
Գլխավոր պահուստ	**1,000,000**	500,000
Այլ պահուստներ	**100,726**	(144,659)
Չբաշխված շահույթ	**2,371,310**	1,672,427
Ընդամենը՝ սեփական կապիտալ	**10,474,036**	9,029,768
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	**47,978,756**	35,164,212

Ֆինանսական հաշվետվությունները՝ Բանկի գործադիր տնօրենի կողմից ստորագրվել են 24 փետրվարի 2012 թվականին:

Գ. ՄԱՀԱՆՅԱՆ
Գործադիր տնօրեն

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2010թ. դրությամբ	7,002,000	200,000	(151,998)	1,019,436	8,069,438
Հատկացում պահուստին	-	300,000	-	(300,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	300,000	-	(300,000)	-
Տարվա շահույթ	-	-	-	952,991	952,991
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	(186,985)	-	(186,985)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-	196,158	-	196,158
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(1,834)	-	(1,834)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	7,339	952,991	960,330
Հաշվեկշիռը 31.12.10թ. դրությամբ	**7,002,000**	**500,000**	**(144,659)**	**1,672,427**	**9,029,768**
Հատկացում պահուստին	**-**	**500,000**	**-**	**(500,000)**	**-**
Սեփականատերերի հետ գործարքներ	**-**	**500,000**	**-**	**(500,000)**	**-**
Տարվա շահույթ	**-**	**-**	**-**	**1, 198,883**	**1, 198,883**
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	**-**	**-**	**275,477**	**-**	**275,477**
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ վնաս	**-**	**-**	**31,254**	**-**	**31,254**
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**(61,346)**	**-**	**(61,346)**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**245,385**	**1, 198,883**	**1,444,268**
Հաշվեկշիռը 31.12.11թ. դրությամբ	**7,002,000**	**1,000,000**	**100,726**	**2,371,310**	**10,474,036**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31.12.11թ-ին ավարտված տարվա համար	31.12.10թ-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	**1,503,997**	1,205,562
Ճշգրտումներ		
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	**300,706**	42,528
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	**62,718**	64,473
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	**-**	(140)
Ստացվելիք տոկոսներ	**(91,148)**	(140,627)
Վճարվելիք տոկոսներ	**23,762**	114,015
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային վերագնահատումից զուտ վնաս	**38,236**	9,015
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	**(7,522)**	(9,928)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**1,830,749**	1,284,898
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Թանկարժեք մետաղներ	**104,243**	(153,785)
Ածանցյալ գործիքներ	**12,894**	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**496,379**	(1,792,252)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**(8,203,723)**	(2,992,258)
Այլ ակտիվներ	**31,288**	(63,478)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ռեպո համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	**6,343,778**	(2,199,985)
Ածանցյալ գործիքներ	**(10,683)**	-
Առևտրային պարտավորություններ	**798,055**	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(946,107)**	(88,340)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**2,620,744**	3,003,516
Այլ պարտավորություններ	**147,916**	20,175
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**3,225,553**	(2,981,509)
Վճարված շահութահարկ	**(311,562)**	(185,178)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**2,913,971**	(3,166,687)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	**(2,932,222)**	1,281,803
Հիմնական միջոցների առք	**(83,744)**	(8,951)
Հիմնական միջոցների վաճառք	**31**	167
Ոչ նյութական ակտիվների առք	**(1,128)**	(15,030)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(3,017,063)**	1,257,989
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
ՀՀ ԿԲ-ից վարկերի ստացում	**(19,121)**	7,445
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում	**1,248,333**	3,328,803
Այլ երկարաժամկետ վարկեր	**172,266**	755,317
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**1,401,478**	4,091,565
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**1,298,386**	2,182,867
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**4,732,924**	2,596,993
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**40,073**	(46,936)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**6,071,383**	4,732,924

Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**4,376,295**	**3,175,545**
Վճարված տոկոսներ	**(2,128,983)**	**(1,469,489)**

Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը

Գերմանիա

Ֆրանկֆուրտ Մայնի վրա	**Commerzbank AG**	EUR USD	COBA DE FF

Ավստրիա

Վիեննա	**Raiffeisen Bank International AG**	EUR USD	RZBA AT WW

Շվեյցարիա

Ցյուրիխ	**UBS AG**	CHF EUR USD	UBSW CH ZH80A

Ռուսաստանի Դաշնություն

Մոսկվա	**UniCredit Bank CJSC**	RUB USD EUR CHF GBP	IMBK RU MM
Մոսկվա	**Promsvyazbank JSCB**	RUB USD EUR	PRMSRUMM

Լատվիա

Ռիգա	**Norvik Banka JSC**	USD EUR	LATBLV22

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Բանկային Միություն (UBA)
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա Հայաստանի Ֆոնդային Բորսա
Առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների միջազգային ցանց (FCI)
Համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցման ընկերություն (SWIFT)
ԱՔՈԱ վարկային բյուրո
Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատ (AMCHAM)
Գերմանահայկական հիմնադրամի գործընկեր բանկ
(«Վերականգնվող էներգետիկայի զարգացում» վարկայն ծրագիր)
ՓՄՁ ԶԱԿ (Փոքր և Միջին Ձեռնարկությունների Զարգացման Ազգային Կենտրոն)
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)
Ազգային Հիփոթեքային Ընկերություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանում՝ «ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 84
Տրված է ՀՀ ԿԲ կողմից 25.02.2005թ-ին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 02574955
ԿԲ թղթակցային հաշիվ՝ 103002102509
SWIFT կոդ՝ ARSJAM22
Reuters էջ՝ ARSJ, ARSI
Bloomberg էջ՝ ASWI
Հեռախոս՝ (+ 374) 10 52 95 93, 58 44 19, 54 07 28
Ֆաքս՝ (+374) 10 52 95 91
Էլ-փոստ՝ info@armswissbank.am
URL: www.armswissbank.am, www.armswissbank.com
Սպասարկման ժամեր՝ 9:30 - 17:30